

դարուն **Ի. Կանտ** (Immanuel Kant, 1724 – 1804 թ.) կը հարցնէր՝ «*ի՞նչ է մարդը*» եւ կը քննարկէր մարդու *Էութիւնը* (անգլ.՝ Essence, գերմ.՝ Wesen): 19-րդ դա-րուն, կենսաբանական մարդաբանութեան (Biological Anthropology) մարզէն ներս՝ **Չ. Դարվինի** (Charles Darwin, 1809 – 1882 թ.) բարեշրջական տեսութիւնը (Theory of Evolution) եւ մարդկային հոգեբանութեան մարզէն ներս՝ **Ս. Ֆրոյդի** (Sigmund Freud, 1856 – 1939 թ.) հոգեվերլուծութիւնը (Psychoanalysis), այս առնչութեամբ իրենց մեծ ազդեցութիւնը պիտի ունենային:

Մարդաբանութիւնը, իր իւրայատուկ տեղը ունի թէ՛ բնագիտութեան մար-զէն ներս (կենսաբանութիւն, բժշկութիւն, եւայլն...) եւ թէ՛ մարդասիրական-հումանիտար գիտութիւններու մարզէն ներս (փիլիսոփայութիւն, աստուածա-բանութիւն, ընկերաբանութիւն, եւայլն):

Ապա, 20-րդ դարուն, արդի փիլիսոփայական մարդաբանութիւնը զարգա-ցաւ շնորհիւ հետեւեալ երեք գերման փիլիսոփաներուն՝ **Մ. Շելեր, Հ. Պլեսներ** եւ **Ա. Գեյլը**:

➤ **Մ. Շելեր** (գերմ.՝ Max Scheler, 1874 – 1928 թ.),

որ ինչպէս տեսանք (Էջ 108), Է. Հոլսեռլի երեւութաբանութեան հետեւորդ մըն էր, սակայն իր կեանքի ու մտքի երկրորդ հանգրուանին ան նուիրուե-ցաւ փիլիսոփայական մարդաբանութեան: Այս իմաստով իր գլխաւոր երկն է՝ «*Մարդու դիրքը տիեզերքին մէջ*» (1928 թ., գերմ. բնագիր՝ „Die Stellung des Menschen im Kosmos“, անգլ.՝ „The Human Place in the Cosmos“): Այս երկին մէջ, Շելեր, կը մշակէ հոգեկան աստիճանական զարգացումը.-

Առաջին աստիճանի վրայ է զգացական մղումը, որ առկայ է կենսունակ (բուսական ու կենդանական) աշխարհի մէջ.

Երկրորդ աստիճանի վրայ է բնագոր, յիշողութիւնը եւ գործնական հմտու-թիւնը, որոնք առկայ են (ասուն եւ անասուն) կենդանական աշխարհի մէջ եւ վերջապէս,

Երրորդ աստիճանի վրայ կը գտնուի մարդկային ոգին: Շելեր, մարդու Էութիւնը չի տեսներ միայն անոր մտածելու, խօսելու կամ կամքի կարո-ղութեան մէջ, այլեւ՝ անոր «սիրող Էակ» (լատ.՝ ens amans) ըլլալուն մէջ:

Շելեր կը շեշտաւորէ նաեւ *անձ*⁽⁴⁰⁾ (Person) հասկացութիւնը, որ կը տարբե-րի «ես»-էն եւ իր հոգեմարմնական գոյութենէն:

Իսկ Շելերի բարոյագիտութեան մասին պիտի անդրադառնանք հետագայ՝ «*Նիւթական արժեքի բարոյագիտութիւն*» բաժնին մէջ (Էջ 119):

➤ **Հ. Պլեսներ** (Helmuth Plessner, 1892 – 1985 թ.),

ընկերաբան-փիլիսոփան, աստիճանական կառոյցով կը բաղդատէ բոյսը, անասուն կենդանին ու մարդը եւ կը ճշդէ մարդու տարակեդրոն դիրքա-

(40) **Անձ** (Person) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, Էջ 383: